



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի երկրորդ եռամսյակում (վերլուծություն)

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 55291 գործարք, որոնց քանակը 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 23.1 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 17.9 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13476 օտարման գործարքների 76.1 %-ը կազմել է առուվաճառքը, 23.1 %-ը՝ նվիրատվությունը և 0.8 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 41.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի երկրորդ եռամսյակում, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.6 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 20.9 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ եռամսյակում, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.8 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 23.5 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2013 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	355500	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282300	282700	282700
Նոր Նորք	250700	252500	252100
Ավան	258750	260200	260100
Էրեբունի	248600	250800	250600
Շենգավիթ	254200	256100	256100
Դավթաշեն	274000	275150	275150
Աջափնյակ	247000	249600	249400
Մալաթիա-Սեբաստիա	239200	242000	242000
Նուբարաշեն	151500	155600	154850
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	271800	273600	273400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել են 0.1 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1111 բնակարան, որի քանակը, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, նվազել է 0.4 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 13.4 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ եռամսյակ 2013 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	114800	115900	115400
	Ապարան	56550	57450	57300
	Թալին	64200	65850	65100
Արարատ	Արտաշատ	94800	96300	95400
	Մասիս	115000	115400	115000
	Վեդի	99300	100600	100100
	Արարատ	75100	75400	75300
Արմավիր	Վաղարշապատ	154000	154150	154150
	Արմավիր	121000	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59000	59800	59800
	Մարտունի	107600	107650	107650
	Վարդենիս	44300	44800	44800
	Ճամբարակ	27700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88300	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55000	55000
	Տաշիր	47000	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20000	20200	20200
Կոտայք	Արուսյան	154700	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	108100	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109300
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66300	66700	66600
	Մարալիկ	40100	40700	40700
Սյունիք	Գորիս	121000	122000	121900
	Կապան	92100	92500	92300
	Սիսիան	91100	91150	91150
	Մեղրի	80050	80900	80800
	Ագարակ	46000	46900	46900
	Քաջարան	94300	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	94700	95000	95000
	Եղեգնաձոր	123200	125500	124900
	Զերմուկ	112000	112900	112600
Տավուշ	Դիլիջան	112700	113150	113150
	Իջևան	118100	118300	118300
	Բերդ	60000	60200	60200

	Նոյեմբերյան	49200	49900	49900
	Այրում	31500	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել են 0.1 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 1333 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 365 գործարք, մարզերում՝ 968 գործարք: 2014 թվականի երկրորդ եռամսյակում, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 12.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 25.4 %-ով, մարզերում՝ 7.9 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 21.7 %-ով, իսկ մարզերում՝ 11.5 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2013 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239700	239500
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150700	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286600	286700	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել են 0.03 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ եռամսյակ 2013 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.	Առաջին եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60000	60050	60050
	Թալին	69200	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96000	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50000	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	156600	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82500	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Զարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	99900	100000	100000
	Սիսիան	96400	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Զերմուկ	131200	131300	131300
Տավուշ	Դիլիջան	112800	113000	113000
	Իջևան	123100	123200	123200
	Բերդ	60000	60100	60100
	Նոյեմբերյան	48100	48300	48300

	Այրում	36100	36250	36250
--	--------	-------	-------	-------

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4581 միավոր (3192.18 հա) հող, որից Երևանում՝ 409 միավոր (107.04 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2510 միավոր (1958.91 հա), որից Երևանում՝ 28 միավոր (11.74 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1313 միավոր (100.69 հա), որից Երևանում՝ 197 միավոր (8.23 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 493 միավոր (102.21 հա), որից Երևանում՝ 169 միավոր (85.50 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 60 միավոր (39.12 հա), որից Երևանում՝ 15 միավոր (1.56 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր (29.51 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 189 միավոր (965.57 հա),
- ջրային հողեր՝ 1 միավոր (5.17 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում օտարված հողերից 3981 միավորի (2942.39 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 350 միավոր (102.28 հա), նվիրատվության գործարքներ՝ 584 միավոր (247.01 հա), որից Երևանում՝ 57 միավոր (4.69 հա) և փոխանակության գործարքներ՝ 16 միավոր (2.78 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.07 հա):

Հանրապետությունում 2014 թվականի երկրորդ եռամսյակում 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 32.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 55.7 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 2.1 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 18.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 1055.47 հա, որից 95.53 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.4 %-ը կամ 1013 միավորը (335.11 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 141 միավոր (4.97 հա), իսկ 73.4 %-ը կամ 2921 միավորը (943.40 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 207 միավոր (97.28 հա): 2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 47 գործարք (943.40 հա):

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակությամբ հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր						բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	8	0.16	54	1.40	79	3.42	21	9.95	7	1.40	106	5.27	73	80.65
Արագածոտն	38	25.13	1	0.04	4	0.34	9	0.16	192	124.36	0	0.00	74	7.75	5	0.36
Արարատ	24	92.15	7	18.79	115	6.04	26	1.23	210	110.73	2	0.06	135	11.83	13	0.14
Արմավիր	8	6.66	4	3.34	3	0.02	6	0.22	249	349.50	1	0.08	120	12.31	9	0.12
Գեղարքունիք	9	17.89	4	1.02	33	2.00	35	1.62	58	62.13	0	0.00	35	3.93	7	0.91
Լոռի	10	2.68	3	4.33	20	0.54	32	3.31	691	436.62	3	1.30	33	3.55	5	0.17
Կոտայք	65	72.87	2	0.25	69	4.05	54	0.94	262	143.52	3	1.52	176	14.08	26	1.96
Շիրակ	3	4.56	1	0.16	17	0.27	7	0.64	83	122.94	0	0.00	33	3.44	9	0.35
Սյունիք	9	14.43	5	3.76	2	0.03	5	1.12	90	81.10	0	0.00	11	0.82	7	0.17
Վայոց ձոր	9	19.71	2	1.41	4	0.24	4	0.50	25	7.28	0	0.00	11	1.74	6	0.08
Տավուշ	5	6.47	1	0.09	20	1.00	17	0.69	81	22.48	4	1.30	20	1.79	11	1.31
Ընդամենը	180	262.55	38	33.35	341	15.93	274	13.85	1962	1470.61	20	5.66	754	66.51	171	86.22

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր								բնակելի կառուցապատման (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատման հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	93	3.17	8	0.16	44	0.94	41	2.07	48	1.81	0	0.00	0	0.00	10	0.46	38	1.35
Արագածոտն	1	0.0003	0	0.00	0	0.00	1	0.0003	46	22.38	33	21.84	1	0.04	4	0.34	8	0.16
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	168	117.35	22	91.30	7	18.79	115	6.04	24	1.22
Արմավիր	3	0.013	0	0.00	1	0.003	2	0.01	18	10.23	8	6.66	4	3.34	2	0.02	4	0.21
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	80	22.53	9	17.89	4	1.02	33	2.00	34	1.62
Լոռի	12	0.14	0	0.00	3	0.01	9	0.13	53	10.72	10	2.68	3	4.33	17	0.53	23	3.18
Կոտայք	2	0.15	0	0.00	1	0.08	1	0.07	184	76.80	61	71.71	2	0.25	68	3.97	53	0.87
Շիրակ	6	0.04	0	0.00	6	0.04	0	0.00	22	5.58	3	4.56	1	0.16	11	0.22	7	0.64
Սյունիք	3	0.0304	0	0.00	2	0.03	1	0.0004	18	19.31	9	14.43	5	3.76	0	0.00	4	1.12
Վայոց ձոր	2	0.023	0	0.00	1	0.02	1	0.003	17	21.84	9	19.71	2	1.41	3	0.22	3	0.50
Տավուշ	5	0.424	1	0.09	1	0.004	3	0.33	38	7.84	5	6.47	0	0.00	19	1.00	14	0.37
Ընդամենը	130	4.00	9	0.25	59	1.13	62	2.63	692	316.39	169	257.25	29	33.10	282	14.80	212	11.24

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 11 գործարք (5.30 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի երկրորդ եռամսյակում, 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 47.0 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 33.3 %-ով, իսկ մարզերում՝ 48.1 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 43.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 2.3 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 1.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 52.6 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2014 թվականի երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	26	13.14	36.8	858.5	289.5	146	69.53	365.0	12000.0	3573.2
Ապարան						11	9.78	86.5	2727.3	698.3
Թալին	7	8.70	38.2	261.5	142.3	20	17.63	93.6	5494.5	720.5
Ծաղկահովիտ						11	25.98	79.5	1000.0	304.9
Արարատի մարզ										
Արտաշատ	8	72.65	140.0	5166.7	3272.8	114	51.88	335.1	10833.3	2597.5
Մասիս	10	14.25	78.9	1007.5	341.7	39	23.99	200.0	11904.8	2894.5
Վեդի	4	4.39	71.3	515.0	246.3	55	34.40	207.0	10795.1	1786.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	6.49	60.6	4207.0	1298.2	128	65.77	294.3	9090.0	1224.7
Բաղրամյան						38	219.80	90.6	2561.1	811.4
Վաղարշապատ	1	0.17	1674.9	1674.9	1674.9	74	59.29	444.4	11764.7	2057.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	1.32	199.8	1875.0	432.2
Ճամբարակ						4	1.29	60.5	953.3	355.2
Մարտունի	2	0.03	1182.5	1455.7	1319.1	18	3.42	51.1	2850.0	764.2
Սևան	1	0.50	132.0	132.0	132.0	1	1.20	52.2	2134.8	328.5
Վարդենիս	6	17.36	331.7	418.0	367.0	30	53.60	41.2	2575.1	398.8
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.59	456.5	2480.0	1462.2	32	11.70	170.4	6424.2	586.0
Գուգարք	3	1.17	815.9	1017.4	948.3	35	9.24	234.6	6065.9	810.9
Սպիտակ	2	0.81	383.2	2553.0	1468.1	1	0.20	250.0	5555.5	720.0
Ստեփանավան	1	0.11	706.2	706.2	706.2	19	12.30	90.6	1686.6	343.6
Տաշիր						604	403.18	45.3	1384.4	179.4
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	10.77	77.5	6660.3	875.8	149	71.49	279.3	11942.7	4012.6
Եղվարդ	37	55.68	72.3	6921.6	2635.2	85	57.51	174.4	11971.8	2409.8
Հրազդան	6	5.27	91.5	1164.0	587.0	16	12.09	130.5	10256.4	1365.0

Շիրակի մարզ										
Ախուրյան						33	35.88	252.0	1693.1	648.8
Ամասիա	2	3.56	132.0	187.0	159.5	15	42.76	40.9	261.0	128.7
Անի	1	1.00	105.0	105.0	105.0	23	33.98	110.6	546.9	419.9
Աշոցք								58.5	215.8	134.2
Արթիկ						12	10.31	79.4	1428.6	454.7
Սյունիքի մարզ										
Գորիս						8	4.61	92.6	1023.2	742.5
Կապան	7	2.46	269.5	654.5	426.7	7	4.84	120.0	841.6	378.5
Մեղրի	1	10.00	53.0	53.0	53.0	7	4.06	193.0	3000.0	748.3
Սիսիան	1	1.96	136.6	136.6	136.6	68	67.59	46.3	1977.4	552.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	0.79	54.7	1500.0	703.7	13	5.08	125.0	10000.0	1940.0
Վայք	5	18.92	41.3	112.5	56.2	12	2.19	58.8	1430.7	655.5
Տավուշի մարզ										
Բերդ						40	9.09	213.3	3783.8	696.7
Իջևան	5	6.47	165.0	1711.8	929.7	15	7.44	267.5	9454.5	1279.6
Նոյեմբերյան						26	5.95	46.7	7368.4	940.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	738.6	2320.7	5217.4	3274.9	64	60375.7	130.7	22200.0	2583.1
Ապարան						8	12151.0	124.1	609.6	390.0
Թալին	1	2656.0	51.6	51.6	51.6			63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	2857.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	6	7072.8	230.3	831.3	488.2	33	30158.0	173.9	7140.3	903.4
Մասիս	99	44238.9	149.5	3773.3	2691.5	71	51182.2	187.5	25000.0	1228.1
Վեդի	10	9131.7	97.2	1630.4	438.4	29	34704.4	126.1	5000.0	664.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						49	55740.5	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						4	3896.6	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	190.0	630.0	630.0	630.0	67	63508.0	197.4	26528.4	1532.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	4092.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	1	34.1	293.3	293.3	293.3	3	688.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	12	11236.5	188.1	666.7	263.3	21	23231.6	119.3	5000.0	289.6
Սևան	3	1207.8	372.6	776.3	507.2	2	3117.1	240.0	3110.4	325.0
Վարդենիս	17	7507.7	66.0	770.0	418.0	4	8138.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	4	1828.3	244.3	1725.0	1317.7	7	10451.2	114.3	1388.9	217.3
Գուգարք	6	694.9	2300.0	5203.3	3360.9	12	4911.5	77.9	14083.3	1263.9

Սպիտակ	4	2653.0	157.3	929.5	405.5	7	12626.0	104.9	1348.3	207.5
Ստեփանավան						6	6913.5	88.2	1666.7	175.5
Տաշիր	3	135.4	351.5	360.7	355.0	1	609.7	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	56	29441.5	310.0	6078.1	2774.2	82	63875.9	264.5	35353.5	2037.2
Եղվարդ	11	9613.4	656.2	4437.5	3043.5	82	65802.5	173.6	27000.0	2882.0
Հրազդան	1	690.0	1428.3	1428.3	1428.3	8	7730.0	117.7	34848.5	1321.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	1934.3	574.3	7692.3	4416.4	19	18511.5	113.6	18750.0	335.8
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	72.0	582.2	594.7	588.4	1	3910.0	67.9	180.6	183.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	1	200.0	160.0	160.0	160.0	13	11969.1	111.8	5000.0	218.2
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2760.0	112.2	1700.0	369.2
Կապան						4	1610.8	67.9	2638.9	316.7
Մեղրի						1	560.0	68.5	632.9	223.3
Սիսիան						3	3256.0	123.5	875.0	223.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						11	17411.1	96.7	7659.6	510.0
Վայք	3	2233.3	850.8	860.0	855.8			120.7	1448.3	238.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	121.5
Իջևան	15	8339.6	580.8	3000.0	2264.0	18	16130.5	74.1	14423.1	535.8
Նոյեմբերյան	4	1644.1	159.4	2199.2	743.5	2	1793.6	125.0	1948.1	232.0

2014 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2002 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.6 %-ը:

2014 թվականի երկրորդ եռամսյակում, 2014 թվականի առաջին եռամսյակի և 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 4.6 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 126 բնակարանի, 232 անհատական բնակելի տան, 916 հասարակական նշանակության, 186 արտադրական նշանակության օբյեկտի, 506 միավոր (1552.24 հա) հողի և 36 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 25 վարձակալության գործարքների քանակը, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 66.7 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 8.7 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1552.24 հա հողերից 9.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1542.85 հա հողերից 1404.03 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 88.82 հա արդյունաբերական օբյեկտների, 0.20 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 625.56 հա, որից 603.79 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6664 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.1 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 21.6 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 11.5 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.7 %), անհատական բնակելի տների (25.1 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.1 %) և հողերի (6.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3742 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 26.8 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 20.7 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 442.12 հա հող, որից 26.64 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 89.5 %-ը կամ 395.74 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.53 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 186.86 հա, որից 186.03 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 614 գործարք, որից 404-ը՝ Երևանում: 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 58.7 %-ով, ընդ որում Երևանում՝ 53.6 %-ով, մարզերում՝ 69.4 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ աճել է 28.5 %-ով, ընդ որում Երևանում՝ 21.7 %-ով, մարզերում՝ 43.8 %-ով:

2014 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5794 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2014 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 20.8 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.2 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.7 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե